ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 18 >> նոյեմբերի 2014թ. N 226

ք. Արմավիր

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԱՐՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 18-ի N 2 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով.

որոշում եմ՝

Հանձնարարել՝

1. Մարզային փրկարարական վարչությանը՝
   1) կազմակերպել ՇՊՄՊ գոտու համայնքների բնակչության ազդարարումը.
   2) կազմակերպել համահավաք հակահրդեհային ջոկատների ծավալումը և պատրաստ լինել ՆՊՄԻ գոտում հրդեհային անվտանգության ապահովմանն ու փրկարարական աշխատանքների իրականացմանը:
2. ՇՊՄՊ գոտու համայնքների, ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներին՝ կազմակերպել բնակչության և անձնակազմի պաշտպանության միջոցառումների իրականացումը (ԱՊՄ բաշխում, պատսպարում, վահանաձև գեղձի արգելափակում):
3. ՆՊՄԻ գոտու համայնքների, ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներին՝
   1) անցնել պաշտպանված կառավարման կետեր և բնակչության և անձնակազմի պաշտպանության միջոցառումների կառավարումն իրականացնել այնտեղից.
   2) իրականացնել Մեծամոր քաղաքի և Արշալույս, Ակնալիճ, Մայիսյան, Ֆերիկ գյուղական համայնքների բնակչության տարահանում.
   3) տարահանումը սկսել ժամը 14.00-ից.
   4) ազդարարել տնտեսության օբյեկտների, համատիրությունների, կազմակերպությունների, ձեռնարկությունների ղեկավարներին և բնակչությանը՝ տարահանման միջոցառումների սկսման ժամանակի և կարգի մասին:

4. Տարահանվածներին ընդունող էջմիածին քաղաքի և Դողս համայնքի ղեկավարներին՝

1) ապահովել ժամանող տարահանված բնակչության ընդունումը և տեղաբաշխումը, նրանց աշխատանքի տեղավորումը և համակողմանի կենսաապահովումը.

2) Ժամը 14.30-ից իրականացնել տրանսպորտի մատակարարումը՝ տարահանման միջանկյալ և տրանսպորտի իջեցման կետերից բնակչության տեղափոխման համար:

5. Մարզային տարահանման հանձնաժողովի նախագահին՝ ապահովել տարահանման միջոցառումների կազմակերպված անցկացումը և տրանսպորտային մարմինների հետ սերտ համագործակցությունը՝ սահմանված ժամկետներում բնակչության տարահանման իրականացման համար:

6. Մարզային ծառայությունների պետերին՝

1) կազմակերպել ծառայությունների ուժերի ներգրավումը տարահանման միջոցառումների համակողմանի ապահովմանը.

2) ժամ+2ժ-ից ձեռնարկել բնակավայրերից նյութական արժեքների դուրս բերումը հատուկ նշանակության տրանսպորտով, այդ նպատակին ներգրավելով նաև տարահանման միջոցառումների անցկացման մեջ չներգրավված տրանսպորտը:

7. «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ Արմավիրի բաժանմունքի պետին՝ կազմակերպել Արմավիր քաղաքի բնակչության հնարավոր տարահանման նպատակով, ժամ+2ժ-ից տարահանման նստեցման կետ երկաթուղային տրանսպորտի մատակարարումը և սահմանված ժամկետներում բնակչության տեղափոխման ապահովումը:

8. Բժշկական ծառայության պետին՝ կազմակերպել տարահանման միջոցառումների բժշկական ապահովումը:

9. Հասարակական կարգի պահպանման ծառայության պետին՝ տարահանման (ընդունման), հավաքակայաններում (միջանկյալ կետերում), նստեցման, իջեցման կետերում, տարաբնակեցման վայրերում ապահովել հասարակական կարգի պահպանումը և տարահանման երթուղիներում երթևեկության կարգավորումը:

10. Առևտրի և սննդի ծառայության պետին՝ մինչև ժամ+6ժ-ը տարաբնակեցման շրջաններում ուժեղացնել առևտրի և հասարակական սննդի կետերի ցանցերը, դրանք ուժեղացնել տարահանվող բնակավայրերից դուրս բերվածների հաշվին:

11. Սույն որոշմամբ նախատեսված տարահանման միջոցառումների իրականացման մասին զեկույցները տրամադրել յուրաքանչյուր 2 ժամը մեկ:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ